ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՍԱՄՎԵԼ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

Սամվել Սերյոժայի Ավետիսյանը ծնվել է 1952 թվականին, Շիրակի մարզի Ախուրյանի տարածաշրջանի Ախուրյան գյուղում: 1969թ. ավարտել է Ախուրյանի միջնակարգ դպրոցը, որից հետո սովորել է Երևանի թիվ 32 պրոֆտեխնիկական ուսումնարանում: 1970-1972թթ. ծառայել է խորհրդային բանակում:

1978 թվականին գերազանցությամբ ավարտել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի (ՀԳԻ) տնտեսագիտական ֆակուլտետը: Բարձր առաջադիմության համար արժանացել է լենինյան թոշակի: Բուհն ավարտելուց հետո որպես տնտեսագետ աշխատել է Ախուրյանի շրջանի Կամո գյուղի կոլտնտեսությունում, իսկ այնուհետև դասախոսական աշխատանքի է հրավիրվել ՀԳԻ գյուղատնտեսական արտադրության կազմակերպման ամբիոնում: Առանց արտադրությունից կտրվելու ավարտել է Գյուղատնտեսության էկոնոմիկայի գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրան:

Սամվել Ավետիսյանը ՀԳԻ գյուղատնտեսական արտադրության կազմակերպման, այնուհետև ներկայիս Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (ՀԱԱՀ) Ագրոբիզնեսի կազմակերպման ամբիոնում աշխատել է անընդմեջ, զբաղեցնելով ասիստենտի, ավագ դասախոսի, դոցենտի, պրոֆեսորի, իսկ 1994-1998 թվականներին՝ ամբիոնի վարիչի պաշտոններ:

1986թ. ՀԳԻ կոլեկտիվը Սամվել Ավետիսյանին ընտրում Միացյալ արհմիութենական կոմիտեի նախագահ: Այդ պաշտոնում նա աշխատել է մինչև 1994 թվականը:

1995-1999թթ. աշխատել է որպես ՀՀ գյուղատնտեսության նախարարության գիտության, կրթության և նոր տեխնոլոգիաների գլխավոր վարչության պետ:

1999 թվականին Սամվել Ավետիսյանը Շիրակի մարզի թիվ 67 ընտրատարածքից ընտրվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր: Անդամակցել է ԱԺ ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովին:

2002թ. փետրվարին Սամվել Ավետիսյանը նշանակվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ և այդ պաշտոնում աշխատել մինչև 2011թ. ապրիլը: 2003-2011թթ. համատեղության կարգով աշխատել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում որպես թեմայի ղեկավար (*2005-2008թթ.)* և գլխավոր մասնագետ: 2011թ-ից աշխատել է ՀԱԱՀ-ի «Ագրոբիզնեսի կազմակերպման» և «Ագրարային քաղաքականության և խորհրդատվության» ամբիոնների պրոֆեսոր:

2013թ. հունվարի 18-ից մինչև հունիսի 1-ը համատեղության կարգով աշխատել է է որպես ՀԱԱՀ-ի «Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության» հետազոտական կենտրոնի տնօրեն: Կարճաժամկետ ծրագրերով ընտրվել է Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD) և Համաշխարհային բանկի (WD), ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (WB), ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրերի (UNDP) փորձագետ:

2013թ. հունիսի 1-ից աշխատում է ՀՊՏՀ-ի «ԱՄԲԵՐԴ» հետազոտական կենտրոնի ազգային անվտանգության հետազոտությունների ծրագրի ավագ գիտաշխատող, իսկ սեպտեմբերի 3-ից՝ նույն կենտրոնի տնօրեն:

1990-ին պաշտպանել է «Գյուղատնտեսության ինտենսիվացումը և լեռնային շրջանների սոցիալ-տնտեսական զարգացումը ՀԽՍՀ Շիրակի գոտու օրինակով» թեմայով թեկնածուական թեզ, իսկ 2003-ին՝«ՀՀ ագրարային շուկայի ձևավորման հիմնախնդիրները և նրանց լուծման ուղիներ» թեմայով դոկտորական ատենախոսություն՝ համապատասխանաբար ստանալով տնտեսագիտության թեկնածուի և դոկտորի գիտական աստիճաններ:

Ս. Ավետիսյանը 1996թ-ից Հայաստանի գյուղատնտեսական գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ է, նա 2004-2005թթ. ընտրվել է Միջին Ասիայի և Անդրկովկասի գյուղատնտեսական գիտահետազոտական ինստիտուտների միջազգային ասոցիացիայի գիտական քարտուղար, իսկ 2005-2007թթ.՝ այդ ասոցիացիայի նախագահ:

Սամվել Ավետիսյանը 118 գիտական հոդվածների և 4 մենագրությունների և 1 ուսումնական ձեռնարկի հեղինակ է: Նա «Հայաստանի պետական ագրարային համալսարանի տեղեկագրի», «Հայաստան, ֆինանսներ և էկոնոմիկա», «Այլընտրանք» գիտական հանդեսների, խմբագրական խորհրդի, ինչպես նաև ատենախոսու-

թյունների պաշտպանության ԲՈՀ-ի 002 և 015 մասնագիտական խորհուրդների անդամ է։

Սամվել Ավետիսյանը պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» մեդալով, Ֆրիտյոֆ Նանսենի միջազգային հիմնադրամի ոսկե հուշամեդալով, ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) արծաթե մեդալով և «Գյուղատնտեսական նվաճումների համար» ոսկե մեդալով։